

**ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԵՏ
ՓՈԽԿԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ***

ՀՏԴ 330.3/4

DOI: 10.52063/25792652-2023.1.16-184

ԴԻԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Տնտեսության Կարգավորման և միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի ՄՏՀ ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
diana.matevosyan34@gmail.com
ORCID: 0000-0002-1219-7176

Մակրոտնտեսական ցուցանիշները երկրի տնտեսական անձնագրի պարամետրեր են՝ շնորհիվ նրա, որ մեկ ագրեգացված միավորով (մեկ թվով) կարողանում են բնութագրել տնտեսության մի ամբողջ ենթահատված:

Հողվածի նպատակն է ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների փոխկախվածությունների ուղղությունների բացահայտումը, ՀՀ-ի համար հիմնական մակրոտնտեսական առնչությունների վերաբերյալ հիպոթեզերի ստուգումը: Հողվածում կիրառվել են վիճակագրական մոդելավորման և վերլուծության գործիքներից՝ դինամիկայի շղթայական և բազիսային ցուցանիշներով վերլուծություն, դինամիկայի միջին ցուցանիշներով վերլուծություն, կառուցվածքային վերլուծություն, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն:

Կատարված վերլուծության արդյունքները վկայում են, որ տնտեսագիտական գրականության մեջ տարածված դրույթներից ոչ բոլորն են գործում ՀՀ պարագայում, մասնավորապես՝ արտահանում-տնտեսական աճ, ներմուծում-տնտեսական աճ, գործազրկության մակարդակ-ինֆլյացիա (Ֆիլիպսի կոր): Որպես արտաքին հատվածի արդյունքային ցուցանիշ՝ դիտարկվել է զուտ արտահանումը, և հաշվարկվել են համապատասխան «ոսկե քառանկյան» մնացած ցուցանիշների միջև կապը: Հաշվարկները ցույց են տվել, որ զուտ արտահանումը «ոսկե քառանկյան» ոչ մի փոփոխականի հետ նշանակալի կամ տնտեսագիտական գրականության տեսանկյունից մեկնաբանելի կապեր չունի: Նաև պարզվել է, որ ՀՀ ներմուծումը բավականին զգայուն է եկամտի փոփոխության նկատմամբ: Գործազրկության մակարդակ-ՀՆԱ կախվածությունը՝ Օու-Քենի օրենքը, նույնպես գործում է ՀՀ պարագայում: Տնտեսության թվայնացման մակարդակի բարձրացումը Էական գործոն է ՀՀ տնտեսական աճի համար:

Հիմնաբառեր՝ Մակրոցուցանիշների համակարգ, տնտեսության թվայնացման մակարդակ, ՏՀՏ համաթիվ, տնտեսական աճ, «ոսկե քառանկյուն», մակրոտնտեսական փոխկախվածություն, կոռելյացիայի գործակից, դինամիկայի ցուցանիշներ:

* Հողվածը ներկայացվել է 09.03.2023թ., գրախոսվել՝ 22.02.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Ներածություն

Ցանկացած երկրի մակրոտնտեսական ներուժը և մակրոտնտեսական քաղաքականության վեկտորը հասկանալու տեսնակյունից կարևորվում է երկրի մակրոտնտեսական ցուցանիշների համակարգի ուսումնասիրությունը: Հոդվածը նվիրված է ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միտումների վերլուծությանը: Մակրոցուցանիշների ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները հիմնականում լինում են 2 բնույթի՝ մի մասում վերլուծվում են մակրոցուցանիշների միտումները, և փորձ է արվում կանխագուշակել ապագա արժեքները, մյուսներում առաջադրվում են մակրոհամակարգի փոխկախվածությունների վերաբերյալ թեզիսներ, և դրանք հերքվում կամ հաստատվում են: Որպես կանոն, այդ ցուցանիշները ստանդարտ, տնտեսագիտական գրականությանը բնորոշ մակրոտնտեսական ցուցանիշներ են: Սույն աշխատությունում բացի տարածված մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի վերլուծությունից, հիմնական կախվածությունների գնահատումից և թեզիսային դրույթների փորձարկումից առաջ է քաշվել ՀՀ տնտեսության թվայնացման մակարդակը բնութագրող համաթվի և տնտեսական աճի միջև կապի մոդելավորումը:

Գրականության ակնարկ

Արտաքին առևտրի՝ որպես տնտեսական աճի գործոնի տեսական հետազոտություններով զբաղվել է տնտեսագիտական մտքի դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների մի ամբողջ սերունդ: Մերկանտիլիստական (Thomus Mun, 1) ուղղության ներկայացուցիչները արտաքին առևտուրը համարում էին հարստության կուտակման միակ միջոց և աճի միակ աղբյուրը տեսնում էին արտահանման ընդլայնման և ներմուծման հովանավորչական քաղաքականության վարման մեջ: Ֆիզեոկրատները (Quensey Francua,1) համարում էին, որ արտաքին առևտուրը «անբեղունակ» գործունեություն է ազգային բարեկեցության աճի տեսանկյունից: Դասականներ Ադամ Ամիթը (Смит 32) և Դավիդ Ռիկարդոն (Рикардо 153) կարծում էին, որ գոյություն ունի դրական էֆեկտ ազգային արդյունքի վրա արտաքին առևտրի փոփոխությունից: Նրանք այդ էֆեկտը մեկնաբանում էին բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունների միջոցով: Է. Հեքշերը (Hecksher 497) և Բ. Օհիլը (Ohlin 1) իրենց գործնային տեսությամբ ցույց տվեցին, որ արտաքին առևտուրը բերում է արտադրության գործոնների ավելցուկ ունեցող երկրների եկամուտների և արտահանման աճի, և, որպես հետևանք, խթանում տնտեսական աճը (Գալոյան և Թադևսյան 146):

Մեկ այլ աշխատությունում (Департамент стран Ближнего Востока и Центральной Азии ПРРЭ) քննարկվում է արտաքին առևտրի ազդեցության ուժգնության հարցը զարգացած և զարգացող երկրներում: Հեղինակները հետազոտության արդյունքում պարզել են, որ արտաքին առևտրի ազդեցությունը ազգային տնտեսությունների աճի վրա առավել արագ տեմպերով է աճում անցումային տնտեսություն ունեցող/զարգացող երկրներում, քան զարգացած:

Ըստ «Արտաքին առևտրի ազդեցությունը տնտեսական աճի վրա» (Степанов 34) հոդվածի՝ գլոբալիզացիայի պայմաններում, չնայած միջազգային տնտեսական հարաբերությունների դիֆֆերենցիացիայի աճին, միջազգային առևտուրը մնում է նրանց գերակշիռ դրսևորման ձևը: Ե. Ա. Ստեպանովն իր «Արտաքին առևտրի ազդեցությունը տնտեսության տնտեսական աճի վրա» հոդվածում իրականացրել է այդ վերլուծությունը զարգացած և զարգացող երկրների համար առանձին-առանձին: Նա առանձնացրել է հիպոթեզեր այդ փոխազդեցությունը տարբեր երկրներում ստուգելու համար:

H_0^1 : Երկրում ընթացիկ ժամանակահատվածում արտահանման և տնտեսական աճի միջև, այլ հավասար պայմաններում, առկա է ուղիղ և գծային կախվածություն:

H_0^2 : Մրցակցող հիպոթեզը՝ արտահանման և տնտեսական աճի միջև, այլ հավասար պայմաններում, ուղիղ և գծային կախվածություն գոյություն չունի:

H_1^1 : Այլ հավասար պայմաններում, նախորդ ժամանակահատվածի ներմուծման ծավալը դրական ազդեցություն ունի ընթացիկ ժամանակահատվածի տնտեսական աճի վրա, և նրանց միջև առկա է գծային կապ:

H_1^2 : Մրցակցող հիպոթեզը՝ այլ հավասար պայմաններում, նախորդ ժամանակահատվածի ներմուծման ծավալները չեն ազդում ընթացիկ ժամանակահատվածում տնտեսական աճի վրա, և նրանց միջև գոյություն չունի գծային կախվածություն:

Արդյունքում ստացվում է, որ 2 հիպոթեզերն էլ հաստատվում են զարգացած և զարգացող տնտեսություն ունեցող երկրների դեպքում:

«Տնտեսական աճի, ինֆլյացիայի, գործազրկության, արտաքին առևտրի, նորարարությունների և ներդրումների ցուցանիշների փոխկախվածության գնահատականը ժամանակակից փուլում» (Юсупов и другие 1) հոդվածում հեղինակներն անդրադարձել են «ոսկե քառանկյան» մոդելին: Այս մոդելը համարվում է ժամանակակից մակրոտնտեսագիտության դասական մոդել, իր արմատներով ելնում է Զեյնսյան ամբողջական պահանջարկի մոդելից: Մոդելը կոչված է ապահովել 4 ոսկյա նպատակային պարամետրերի իրացումը. կայուն տնտեսական աճի տեմպեր, ցածր գործազրկության մակարդակ, գների կայունություն, արտաքին առևտրի հաշվեկշռվածություն: «Ոսկե քառանկյան» մոդելը, սակայն, ունի խնդիր, այն է՝ դրա մի նպատակը կարող է հակասել մյուսին: Հոդվածում գնահատված է «ոսկե քառանկյունը» ՌԴ-ի համար: Ստացվում է, որ ամենաուժեղ, ընդ որում՝ հակադարձ և ոչ գծային կախվածությունը գործազրկության և տնտեսական աճի միջև է: Մնացած բոլոր պարամետրերի միջև առկա է միջին ուժգնության կախվածություն: Տնտեսական աճի և զուտ արտահանման միջև առկա է դրական կապ, իսկ տնտեսական աճի և գների մակարդակի միջև՝ բացասական, գների մակարդակի և գործազրկության միջև՝ դրական և այլն: Բոլոր զույգերը դիտարկելով՝ հեղինակները ՌԴ-ի դեպքում ևս հայտնաբերել են նպատակների միջև հակասություններ և եկել են այն եզրակացության, որ պետությունը, պետական կառավարման մարմինները պետք է որոշեն, թե ինչը և որքանով է իրենց համար առաջնահերթ և գերակա, այսինքն, թե ինչպես կարելի է գոնե մեկ նպատակի որոշակի թերակատարմամբ հասնել մնացածի ապահովմանը:

«Տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գործոնային վերլուծություններ» հոդվածում (Տեփոյան 1) հեղինակը կառուցել է ֆինանսական համակարգի բնութագրող օպտիմալ ցուցանիշների համակարգ և գնահատել մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդեցությունը: Մակրոտնտեսական հատվածը բաժանել է 3 ենթահատվածի՝ իրական, պետական, արտաքին և առանձնացրել համապատասխան ցուցանիշների խումբ: Այնուհետև կատարել կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն՝ պարզելու ցուցանիշների միջև կապի ուժգնությունը:

Տվյալ հոդվածում (Թադևոսյան և ուրիշներ 1) հեղինակները մոդելավորել են ՀՆԱ-գործազրկություն կապը, իսկ միաժամանակյա ռեգրեսիոն հավասարումների համակարգով ՀՆԱ~Աշխատանք+Կապիտալ և Արտաքին առևտրաշրջանառություն-ՀՆԱ կապերը՝ ՀՀ օրինակով: Մոդելավորման արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ-ում 1 տոկոս տնտեսական աճը տանում է գործազրկության 0.26 տոկոսով կրճատման, իսկ 1 միավոր ՀՆԱ աճը տանում է 0.51 առևտրաշրջանառության աճին:

Մեթոդաբանություն

Տնտեսական գործընթացների քանակական նկարագրման համար օգտագործվում են հատուկ բարձր աստիճանի ագրեգացված ցուցանիշներ (Михнева и Ровенская 1), որոնք արտացոլում են տնտեսության իրավիճակը որպես մեկ ամբողջություն և հաշվարկվում են ավելի տարրականացված ցուցանիշների հիման վրա, որոնք էլ, իրենց հերթին, ստացվում են վիճակագրական տվյալներից: Սույն հոդվածում օգտագործվել է մակրոտնտեսական ցուցանիշների հետևյալ խմբավորումը (Михнева и Ровенская 1)՝

1. Ծավալաարժեքային՝ ՀՆԱ, ՀԱԱ, Ազգային հարստություն, Համախառն հասարակական արդյունք, Վերջնական կամ զուտ արտադրանք, Ազգային եկամուտ:

2. Արտաքին տնտեսական գործունեությունն արտահայտող ցուցանիշներ՝ արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ, փոխարժեք, արտաքին առևտրի գներ:

3. Գների մակարդակի և դինամիկայի ցուցանիշներ՝ ՍԳԻ, ՀՆԱ դեֆլյատոր:

4. Չբաղվածության մակարդակի և դինամիկայի ցուցանիշներ՝ զբաղվածների թիվ, զբաղվածության մակարդակ, գործազուրկների թիվ, գործազրկության մակարդակ, տնտեսական ակտիվություն, տնտեսապես ակտիվ բնակչություն, աշխատուժ:

5. ԴՎԶ ցուցանիշներ՝ փողի զանգված, տոկոսադրույքներ, ավանդների, վարկերի, պարտադիր պահուստավորման ծավալ, արժեթղթերի ծավալ և եկամտաբերություն:

6. Տնտեսության թվայնացման (զարգացման) ցուցանիշներ՝ ՏՀՏ համաթիվ (Մաթևոսյան 602):

Մակրոտնտեսական ցուցանիշների տարեկան ժամանակային շարքերը վերլուծվել են դինամիկայի շղթայական և բազիսային ցուցանիշների միջոցով: Օգտագործվել է կառուցվածքային վերլուծության մեթոդը: ՀՆԱ-ի և ՏՀՏ համաթվի միջև կապի մոդելավորման համար իրականացվել է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Հիպոթեզերի ստուգման նպատակով մակրոտնտեսական ցուցանիշների կապի բացահայտման համար հաշվարկվել են կոռելյացիայի գործակիցներ: Բացի դրանից հաշվարկվել են մասնակի և միջին էլաստիկության գործակիցներ՝ ըստ ցուցանիշների զույգերի:



Վերլուծություն

Դիտարկենք գրականության ակնարկում ներկայացված ցուցանիշների դինամիկ շարքերը ՀՀ-ի համար: Վերլուծությունը սկսենք ՀՆԱ-ի դինամիկան և կառուցվածքը բնութագրող ցուցանիշներից (զճ 1.)՝

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ն բնութագրող ցուցանիշների դինամիկան 2012-2021 թթ.: Գծապատկերից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ն և համախառն կուտակումը դրսևորել են աճի միտում. ընդ որում՝ ՀՆԱ-ի աճի տեմպն ավելի բարձր է, քան համախառն կուտակման: ՀՆԱ-ի և համախառն կուտակման դինամիկայի շարքերի առավելագույն արժեքները գրանցվել են 2021 թ.՝ համապատասխանաբար 6.98 և 1.4 տրիլիոն դրամ: Նվազագույն արժեքը ՀՆԱ-ի դեպքում հետազոտվող ժամանակաշրջանի սկիզբն է՝ 4.27 տրիլիոն դրամ, իսկ համախառն կուտակման դեպքում 2019 թ.՝ 0.91 տրիլիոն դրամ: Ստացվում է՝ ՀՆԱ-ն կայուն աճի ժամանակային տրենդին համապատասխան միտում է դրսևորել, իսկ համախառն կուտակման դինամիկան ենթարկվել է թեթև պարբերաշրջանի: Միջինում ՀՆԱ-ն եղել է 5.50, իսկ համախառն կուտակումը՝ 1.12 տրիլիոն դրամ մակարդակում: Վարիացիայի գործակիցները կազմել են 16 և 15-ական տոկոսներ, ստացվում է միջինում շարքերը տատանվել են այդքան տոկոսով: ՀՆԱ միջին

հավելաճի տեմպը հավասար է 5.6%, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի ՀՆԱ-ն աճել է 5.6%: Միջին բացարձակ հավելաճը կազմում է 300, ինչը նշանակում է, որ ամեն տարի միջինում ՀՆԱ-ն ավելանում է 300 մլրդ. դրամով:

Գծապատկեր 1: ՀՀ ՀՆԱ-ն նկարագրող ցուցանիշների դինամիկան 2012-2021 թթ.



Աղբյուրը՝ ԱՎԾ, ԿԲ տվյալների բազա

2021թ. 2020թ.-ի համեմատ ՀՆԱ-ն աճել է 800 մլրդ դրամով կամ 13%-ով (6% իրական, 7% գնաճ): Առավելագույն հավելաճը եղել է 2021 թ.՝ 801 մլրդ դրամ, նվազագույնը՝ 2020 թ.՝ -362 մլրդ դրամ: Աճեցման տեմպը նվազող է, ինչը վկայում է


ՀՆԱ աճի տեմպերի դանդաղեցման մասին: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ, ՀՆԱ-ն աճել է 2.72 տրիլիոն դրամով կամ 63.7%-ով:

Համախառն կուտակման միջին հավելածի տեմպը հավասար է 3.6%, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի համախառն կուտակումն աճել է 3.6%: Միջին բացարձակ հավելվածը կազմում է 44 մլրդ դրամ, նշանակում է՝ միջինում ամեն տարի համախառն կուտակումն ավելանում է 44 մլրդ դրամով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ համախառն կուտակումն աճել է 229 մլրդ դրամով կամ 19%-ով: Առավելագույն հավելվածը եղել է 2018 թ.՝ 323 մլրդ դրամ: Նվազագույնը՝ 2019 թ.՝ -209 մլրդ դրամ: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ համախառն կուտակումն աճել է 392 մլրդ դրամով կամ 37.2%-ով:

ՀՆԱ դեֆլյատորի միջին արժեքը կազմում է 102, նշանակում է՝ միջինում գևաճի հաշվին ՀՆԱ ցուցանիշի աճը 2% է: Եթե միջին շուկայական ՀՆԱ-ի աճից, որը 5.6% էր, հանենք 2%, ստացվում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի ՀՆԱ-ն ծավալային աճել է 3.6%:

Եթե նայենք ՀՆԱ ծախսային կառուցվածքին, պարզ է դառնում, որ ՀՆԱ-ն ծախսվում է վերջնական սպառման վրա հետազոտվող ժամանակահատվածում միջինում 93%: Միջինում 21%-ը բաժին է ընկնում համախառն կուտակմանը, իսկ արտաքին առևտրաշրջանառությունից ունենք բացասական սալդո՝ -14%: Սակայն նկատվում է արտաքին առևտրային բացասական սալդոյի տեսակարար կշռի կրճատման միտում՝ ի հաշիվ վերջնական սպառման ծախսերի: Մասնավորապես, եթե ամենաբևեռացված բաշխման դեպքում 2013 թ., ՀՆԱ կառուցվածքում վերջնական սպառման ծախսերը կազմել են 99%, փաստացի համախառն կուտակումը ու սալդոն իրար գտացրել են, ապա օրինակ 2021 թ. արդեն վերջնական սպառման ծախսերը կազմել են 88%, իսկ սալդոն -8%:

Գծապատկեր 2: ՀՀ փողի զանգվածի դինամիկան 2012-2021 թթ. (միլիոն դրամ)




Աղբյուրը՝ ԿԲ տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Գծապատկերից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում փողի զանգվածը դրսևորել է աճի միտում: Փողի զանգվածի դինամիկայի շարքի առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թ.՝ 3.8 տրիլիոն դրամ: Նվազագույն արժեքը հետազոտվող ժամանակաշրջանի սկիզբն է՝ 1.3 տրիլիոն դրամ: Միջին արժեքը հավասար է 2.4 տրիլիոն դրամի: Փողի զանգվածի միջին հավելածի տեմպը հավասար է 12.2%, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի փողի զանգվածն աճել է 12.2%-ով: Միջին բացարձակ հավելվածը կազմում է 273 մլրդ դրամ, նշանակում է՝ միջինում ամեն տարի փողի զանգվածն ավելանում է 273 մլրդ դրամով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ փողի զանգվածն աճել է 441 մլրդ դրամով կամ

13%-ով: Առավելագույն հավելաճը եղել է 2021 թ.՝ 441 մլրդ դրամ: Նվազագույնը՝ 2014 թ.՝ 129 մլրդ դրամ: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ փողի զանգվածն աճել է 2.46 տրիլիոն դրամով կամ 182.4%-ով:


Գծապատկեր 3: ՀՀ ՍԳԻ դինամիկան 2012-2021 թթ. (%)



Աղբյուրը՝ ԿԲ տվյալների բազա <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Գծ. 3-ում ներկայացված է ՍԳԻ դինամիկան 2012-2021 թթ. : Գծապատկերից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում ՍԳԻ-ն չունի հստակ միտում: ՍԳԻ դինամիկայի շարքի առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թ.՝ 107.2%: Նվազագույն արժեքը՝ 2016 թ.՝ 98.6%: Միջին արժեքը հավասար է 102.7%: ԿԲ նպատակային գնաճի մակարդակը սահմանել է 4%: Ստացվում է՝ դիտարկվող ժամանակահատվածում՝ 2013 թ. և 2021 թ., խախտվել է ԿԲ ուղենիշը՝ համապատասխանաբար 105.8 և 107.2 արժեքներով: Միջին բացարձակ հավելաճը կազմում է 0.5%, նշանակում է՝ միջինում ամեն տարի ինֆլյացիան ավելացել է 0.5%-ով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ ՀՀ-ում գներն աճել են 6 տոկոսային կետով:

Գծապատկեր 4: ՀՀ արտահանման, ներմուծման դինամիկան 2012-2021 թթ. (միլիոն դրամ)



Աղբյուրը՝ ԱՎԾ, ԿԲ տվյալների բազա

Գծ. 4-ում ներկայացված է ՀՀ արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեկան դինամիկան 2012-2021 թթ.: Գծապատկերից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում ՀՀ արտահանումն ու ներմուծումը դրսևորել են աճի միտում, շուկի ենթարկվել 2020 թ. **ավելին՝ մի շարքը կրկրնել է մյուսի վարքագիծը, ինչը նշանակում է, որ, օրինակ, կարող ենք մոդելավորելիս այդ ցուցանիշները վերցնել որպես մեկ ամբողջական ցուցանիշ՝ որպես առևտրաշրջանառություն:** Արտահանման և ներմուծման դինամիկայի շարքերի առավելագույն արժեքները գրանցվել են 2019 թ.՝ համապատասխանաբար 2.7 և 3.6 տրիլիոն դրամ: Նվազագույն արժեքները հետազոտվող ժամանակաշրջանի սկիզբն է՝ 1.2 տրիլիոն և 2.1 տրիլիոն դրամ: Միջին արժեքները կազմում են համապատասխանաբար 1.9 և 2.6 տրիլիոն դրամ: Ինչպես երևում է, միջին արժեքին ամենամոտ արժեքները գրանցվել են հետազոտվող ժամանակաշրջանի միջևամասում, այսինքն՝ ակնհայտ է աճող տրենդը, բացի դրանից 2020 թ. անկումը համապատասխանում է միջիններին՝ նշանակում է՝ 2020 թ. ՀՀ արտաքին առևտուրը ետ է մղվել 4 լագով:


Արտահանման միջին հավելածի տեմպը հավասար է 8.6 տոկոս, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի արտահանումն աճել է 8.6%-ով: Միջին բացարձակ հավելածը կազմում է 144 մլրդ դրամ, նշանակում է՝ միջինում ամեն տարի արտահանումն ավելանում է 144 մլրդ. դրամով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ արտահանումն աճել է 627 մլրդ դրամով կամ 34%-ով: Առավելագույն հավելածը եղել է 2021 թ.՝ 627 մլրդ դրամ: Նվազագույնը՝ 2020 թ.՝ 866 մլրդ դրամ: Ստացվում է՝ հետազոտվող ժամանակաշրջանում ավելի մեծ է եղել բացասական շուկը, քան դրական, այսինքն՝ 2021թ. բացասական ալիքից արտահանումը դեռևս ամբողջովին չի վերականգնվել: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ արտահանումն աճել է 1.3 տրիլիոն դրամով կամ 109.8%-ով:

Ներմուծման միջին հավելածի տեմպը հավասար է 4.5%, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի ներմուծումն աճել է 4.5 %-ով: Միջին բացարձակ հավելածը կազմում է 110 մլրդ դրամ, նշանակում է՝ միջինում ամեն տարի ներմուծումն ավելանում է 110 մլրդ. դրամով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ ներմուծումն աճել է 605 մլրդ դրամով կամ 25%-ով: Առավելագույն հավելածը եղել է 2021 թ.՝ 605 մլրդ դրամ: Նվազագույնը՝ 2020 թ.՝ 1,128 մլրդ դրամ: Ստացվում է՝ հետազոտվող ժամանակաշրջանում ավելի մեծ եղել է բացասական շուկը, քան դրական, այսինքն՝ 2021 թ. բացասական ալիքից ներմուծումը դեռևս ամբողջովին չի վերականգնվել: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ ներմուծումն աճել է 996 մլրդ դրամով կամ 48.2%-ով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ վերջին տարիներին արտահանումն ունի առաջանցիկ աճի տեմպ ներմուծման նկատմամբ, այսինքն՝ առկա է դրական դինամիկա ՀՀ արտաքին առևտրում:


Գծ. 5-ում ներկայացված են ՀՀ արտաքին առևտրի գների ինդեքսները և դոլար/դրամ փոխարժեքը: Փոխարժեքը դրսևորել է աճի միտում, իսկ գների ինդեքսները չունեն բացահայտ միտում: 2021 թ. արտահանման գների ինդեքսը կազմել է 120, իսկ ներմուծմանը՝ 111, ինչը նշանակում է, որ միայն գների հաշվին ՀՀ-ն շահել է արտաքին առևտրից: 2016 թ. արտահանման և ներմուծման գների ինդեքսները հավասար են, նշանակում է՝ գների Էֆեկտ չկա, միայն ծավալային Էֆեկտ է եղել այդ տարում:

Գծապատկեր 5: ՀՀ արտաքին առևտրի գների դինամիկան 2012-2021 թթ.



Աղբյուրը՝ ԱՎՏ տվյալների բազա <https://www.armstat.am/am/?nid=13>

Գծապատկեր 6: ՀՀ անվանական, իրական աշխատավարձերի դինամիկան 2012-2021 թթ.




Աղբյուրը՝ ԱՎՏ տվյալների բազա <https://www.armstat.am/am/?nid=13>

Գծ. 6-ում ներկայացված է անվանական և իրական անվանական աշխատավարձերի դինամիկան 2012-2021 թթ.: Գծապատկերից երևում է, որ 2-ն էլ դրսևորել են աճի միտում և նմանատիպ դինամիկա: Միայն 2021 թ. անվանական աշխատավարձն ավելի կտրուկ է աճել ինֆլյացիայի ոչ կանոնավոր/նպատակային տեմպերի պատճառով: 2021 թ. անվանական աշխատավարձը կազմել է 204 հազար դրամ, իսկ իրականը՝ 190 հազար դրամ: Ստացվում է 14 հազար դրամի տարբերություն: Միջինում անվանական աշխատավարձը կազմել է 169 հազար դրամ, իսկ իրականը՝ 165 հազար դրամ, տարբերությունը՝ 4 հազար դրամ: Իսկ նպատակային ցուցանիշի շրջանակներում ինֆլյացիայի տարիներին՝ ինֆլյացիոն ոչ ավել 4%-ից, անվանական աշխատավարձի և իրական աշխատավարձի միջև տարբերությունը 3 հազար դրամ է: Ստացվում է, որ ինֆլյացիայի բարձր տեմպը դրսևորվում է որպես անվանական 10 հազար դրամի բարեկեցության վատացում: Զանի

որ 2022 թ. տվյալները փաստում են, որ ինֆլյացիան կազմել է 8.3%, սա հանգեցրել է ևս 10 հազար դրամով բարելկեցության վատթարացման (մոտավոր հաշվարկներով), այսինքն՝ 2021-2022 թթ. ազդեցությունը կկազմի 20 հազար դրամ:


Գծապատկեր 7: ՀՀ աշխատուժի շուկայի ցուցանիշների դինամիկան 2012-2021 թթ.



Աղբյուրը՝ ԱՎՏ տվյալների բազա <https://www.armstat.am/am/?nid=13>

Գծ. 7-ում ներկայացված են ՀՀ աշխատուժի դինամիկան նկարագրող հիմնական ցուցանիշները՝ զբաղվածությունը, գործազրկությունը, տնտեսապես ակտիվ բնակչությունը և գործազրկության, տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակները: Ինչպես երևում է, դրանք բոլորը դրսևորել են նվազման միտում: Ընդ որում, գործազրկության մակարդակը 2014 թ.-ից սկսել է աճել և առավելագույն արժեքն ընդունել է 2018 թ., այնուհետև դրսևորել նվազման միտում: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ գործազրկության մակարդակը նվազել է 2 տոկոսային կետով:

Գծապատկեր 8: ՀՀ ՏՀՏ համաթվի դինամիկան 2012-2021 թթ. (միավոր)



Հեղինակի հաշվարկ

Տնտեսապես ակտիվ բնակչության (ՏԱՊ) մակարդակը ամբողջ հետազոտվող ժամանակաշրջանի ընթացքում նվազել է, 2021 թ. 2012 թ.-ի համեմատ նվազել է 4.2 տոկոսային կետով: ՏԱՊ-ը 2021թ-ին 2012թ-ի նկատմամբ նվազել է 244 հազար մարդով կամ 17%-ով, զբաղվածների թիվը նվազել է 179 հազար մարդով կամ 15%-ով, գործազուրկների թիվը՝ 65 հազարով կամ 27%-ով:

Որպես ՀՀ թվայնացման մակարդակը բնութագրող ցուցիչ՝ դիտարկենք ՀՀ-ի համար հաշվարկված ՏՀՏ համաթիվը (Մաթևոսյան 602) (գծ. 8):

Գծապատկերից երևում է, որ հետազոտվող ժամանակահատվածում այն դրսևորել է աճի միտում: Առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թ.՝ 13.42 միավոր, նվազագույնը՝ 2012 թ.՝ 11.39 միավոր: Միջինում հետազոտվող ժամանակահատվածը եղել է 12.06 մակարդակում: Մեդիանն հավասար է 11.77: Ստացվում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ IDI ինդեքսի արժեքների 50%-ը ցածր է եղել 11.77-ից: Միջինը մեծ է մեդիանայից, նշանակում է ոչ համասեռ բաշխում: Շարքի ավելի մեծ արժեքներն ունեցել են լուրջ ազդեցություն շարքի դիստրիբյուցիոն ընդհանուր պատկերի վրա: Միջին հավելաճի տեմպը հավասար է 1.8%, նշանակում է՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում ամեն տարի ՀՀ IDI ինդեքսն աճել է 1.8%-ով: Միջին բացարձակ հավելաճը կազմում է 0.23, նշանակում է՝ միջինում ամեն տարի ինդեքսն աճում է 0.23 տոկոսային կետով: 2021 թ. 2020 թ.-ի համեմատ ՀՀ IDI ինդեքսն աճել է 0.48 տոկոսային կետով կամ 4%-ով: Առավելագույն հավելաճը եղել է 2020/2021 թթ.՝ 0.48 տոկոսային կետ: Նվազագույնը՝ 2016 թ.՝ -0.12 տոկոսային կետ: Աճեցման տեմպը աճող է, ինչը վկայում է ՀՀ տնտեսության թվայնացման տեմպերի արագացման մասին: 2021 թ. 2012 թ.-ի համեմատ ՀՀ IDI ինդեքսն աճել է 2.03 տոկոսային կետով կամ 18%-ով:

ՏՀՏ ինդեքսի և ՀՆԱ-ի կապի մոդելավորման համար հավասարումը հետևյալն է՝

$$(1) \ln gdp = c_1 + c_2 * IDI + \varepsilon$$

Մոդելի գնահատման արդյունքները հետևյալն են՝

Աղյուսակ 1: ՀՆԱ-ՏՀՏ մոդելի գնահատման արդյունքներ

<i>Regression Statistics</i>				
Multiple R	0.95			
R Square	0.90			
Adjusted R Square	0.90			
F	<i>Significance F</i>			
161.5125	0.00000			
	<i>Coefficients</i>	<i>Standard Error</i>	<i>t Stat</i>	<i>P-value</i>
Intercept	21.55	0.1001	215.0973	0.0000
IDI	0.14	0.0110	12.70876	0.0000

Հեդիանակի հաշվարկեր

Աղյուսակ 1-ից երևում է, որ մոդելը լավ որակի, նշանակալի է ըստ առանձին գործակիցների և ընդհանուր առմամբ: ՏՀՏ ինդեքսի էլաստիկության գործակիցը կազմում է 1.95, նշանակում է՝ 1 տոկոս ՏՀՏ ինդեքսի աճը բերում է 1.95 տոկոս ՀՆԱ աճի, այսինքն՝ 1.95 տնտեսական աճ: Ըստ հողվածում (Մաթևոսյան 602) կիրառված

ՏՀՏ ինդեքսի կանխատեսման մոդելի՝ ՏՀՏ ինդեքսի միջին կանխատեսվող աճը կազմում է 2 տոկոս, նշանակում է 3.9 տնտեսական աճ:

Փորձարկենք գրականության ակնարկում ներկայացված/առաջ քաշված հիպոթեզերը ՀՀ-ի համար ((Степанов 34), (Юсупов и другие 1), (Keynes 1))՝

Արտահանում-ՏՆՏ աճ ուղիղ ու դրական կապ կամ կապ չկա

ՀՀ արտահանում-տնտեսական աճ ուղիղ և գծային կապի մասին հիպոթեզը ստուգելու համար հաշվարկվել է արտահանման և տնտեսական աճի կոռելյացիայի գործակիցը: Այն կազմել է -0.51, նշանակալիության Ստյուդենտի վիճակագրությունը կազմել է 2.5, իսկ աղյուսակայինը՝ 2.4, հետևաբար կոռելյացիայի գործակիցը նշանակալի է: Ստացվում է՝ ՀՀ դեպքում հերքվում է հիմնական հիպոթեզը դրական կապի մասին:

Տնտ աճ t-ներմուծում t-1 ուղիղ ու դրական կապ կամ կապ չկա

ՀՀ ներմուծում (lag1)-տնտեսական աճ ուղիղ և գծային կապի մասին հիպոթեզը ստուգելու համար հաշվարկվել է լագավորված ներմուծման և տնտեսական աճի կոռելյացիայի գործակիցը: Այն կազմել է -0.74, նշանակալիության Ստյուդենտի վիճակագրությունը կազմել է 4.6, իսկ աղյուսակայինը՝ 2.5, հետևաբար կոռելյացիայի գործակիցը նշանակալի է: Ստացվում է՝ ՀՀ դեպքում հերքվում է հիմնական հիպոթեզը դրական կապի մասին:

Ներմուծում-ՀՆԱ

ՀՀ ներմուծում-ՀՆԱ կապի մոդելավորման արդյունքում կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.97, նշանակում է՝ ՀՀ-ի դեպքում գոյություն ունի ուժեղ ուղիղ կապ ներմուծման և ՀՆԱ-ի միջև: Հաշվենք նաև Քեյնսի (Keynes 1) կողմից առաջ քաշված ներմուծման սահմանային հակումը ՀՀ-ի համար, դա ներմուծում-ՀՆԱ ռեգրեսիայի հավասարման բետա գործակիցն է, որը կազմում է 0.48, նշանակալի է 99 տոկոսանոց նշանակալիության մակարդակում, Ստյուդենտի վիճակագրությունը կազմում է 16.3: Ստացվում է՝ 1 միավոր եկամտի/ՀՆԱ-ի ավելացումը տանում է 0.48 միավոր ներմուծման ավելացման, այսինքն՝ հակումը 0.48 է:

Ոսկե քառանկյուն

Ոսկե քառանկյան մոդելի հիպոթեզերից մի քանիսը փորձարկված են վերևում, ստուգենք նաև ՀՀ գործազրկության մակարդակ-ՍԳԻ և տնտեսական աճ-ՍԳԻ կախվածության մասին հիպոթեզերը: Տնտեսական աճ և ՍԳԻ-ի կոռելյացիան կազմում է 0.04, հետևաբար կախվածությունը նշանակալի չէ, դիտումների ամպի հետազոտությունից պարզ է դառնում, որ չի կարելի այս 2 փոփոխականների միջև կապը մոդելավորել որևէ վիճակագրական կախվածությամբ, այն է՝ ֆունկցիոնալ ու պատահականի մոտարկմամբ:

Գործազրկության մակարդակ և ՍԳԻ-ի կոռելյացիայի գործակիցը կազմում է -0.72, նշանակում է՝ ՀՀ պարագայում գործազրկության մակարդակի և ինֆլյացիայի միջև առկա է բացասական կախվածություն, ինչը չի համապատասխանում տեսությանը:

Եզրակացություն

ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների միտումների վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ հետազոտվող ժամանակահատվածում ՀՆԱ-ն և նրա կառուցվածքային բաղադրիչները դրսևորել են աճող տրենդ, ինչպես նաև աճել է փողի զանգվածը, թվայնացման մակարդակը: Աշխատանքի շուկա բնութագրող ցուցանիշներից աշխատուժի ցուցանիշները դրսևորել են նվազող տրենդ, իսկ աշխատանքի վարձատրության ցուցանիշները՝ աճող: Արտաքին առևտրի գները բազմաբնույթ գործոնների ազդեցության և առևտրի զամբյուղում միմյանց

չեզոքացնող գներով ապրանքների հետևանքով հիմնականում կայուն են, միայն կտրուկ փոփոխվել են (աճել) 2021 թ.՝ հետպանդեմիական ալիքի ազդեցությամբ: ՀՀ ինֆլյացիան հիմնականում կայուն է հետազոտվող ժամանակահատվածում, ինչը ՀՀ ԿԲ կողմից իրականացվող արդյունավետ ԴՎԶ հետևանք է, իսկ 2021 թ. աճը պայմանավորված է պանդեմիայի և 2020 թ. 44-օրյա պատերազմի շնչերով:

Տնտեսության թվայնացումը տանում է տնտեսական աճի. մասնավորապես 1 %-ով թվայնացումը բերում է 1.95% տնտեսական աճի: Ըստ կանխատեսման՝ ստացվում է, որ միայն թվայնացման զարգացման և խորացման հաշվին ՀՀ-ն կունենա 4 տոկոս տնտեսական աճ: Ստացվում է՝ գրեթե կրկնապատիկ ազդեցության գործոն է տնտեսության թվայնացման մակարդակի աճը ՀՀ տնտեսական աճի ապահովման համար: Անհրաժեշտություն է առաջանում ընդգրկել նման ազդեցիկ ցուցանիշը մակրոտնտեսական քաղաքականություն մոդելավորելիս որպես ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ) բնութագրող ցուցիչ:

Արտահանման և տնտեսական աճի միջև ուղիղ և գծային կապի մասին հիպոթեզը հերքվել է ՀՀ-ի համար: Լախորդ ժամանակաշրջանի ներմուծումը բերում է ընթացիկ ժամանակահատվածում տնտեսական աճ, այսինքն՝ մեկ լազով հետ ներմուծման և տնտեսական աճի միջև ուղիղ և գծային կապի մասին հիպոթեզը հերքվել է ՀՀ-ի համար:

Ներմուծման ֆունկցիայի կառուցման և գնահատման արդյունքում ստացվել է, որ ՀՀ-ում մեկ միավոր եկամտի աճը տանում է 0.48 միավոր ներմուծման աճին: Իսկ ՀՆԱ առևտրաշրջանառություն կապի մոդելավորման արդյունքները ցույց են տվել, որ 1 միավոր ՀՆԱ աճը տանում է 0.51 առևտրաշրջանառության աճին:

«Ոսկե քառանկյան» 4 փոխկախվածությունների ուղղությունները հետևյալն են ՀՀ-ի համար՝

- Տնտեսական աճ - Գործազրկության մակարդակ՝ կախվածությունը՝ հակադարձ, ազդեցության չափը՝ 1 տոկոս տնտեսական աճը տանում է գործազրկության 0.26 տոկոսով կրճատման,
- Գործազրկության մակարդակ – ՍԳԻ՝ կախվածությունը՝ հակադարձ, տնտեսագիտական տեսանկյունից անմեկնաբանելի,
- Տնտեսական աճ-ՍԳԻ՝ կախվածությունը՝ անորոշ, ոչ վիճակագրական,
- Չուտ արտահանում-տնտեսական աճ, զուտ արտահանում-ՍԳԻ բացասական և ոչ նշանակալի կապ, զուտ արտահանում- գործազրկության մակարդակ՝ ոչ նշանակալի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալոյան Դիանա, Թադևոսյան Չոյա. «Միջազգային տնտեսագիտություն: Ուսումնական ձեռնարկ», ՀԴՏՀ.-Մ730 Եր.: Տնտեսագետ, 2018.-348էջ էջ 146-160: Հղումը՝ <http://library.asue.am/books/5992.pdf>

2. ՀՀ ԱՎԾ տվյալների բազա՝ <https://www.armstat.am/am/?nid=13>

3. ՀՀ ԿԲ տվյալների բազա՝

<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

4. Մաթևոսյան Դիանա. «ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները. ներքին և արտաքին մարտահրավերներ». ՀԴՏՀ 28-րդ գիտաժողովի կյուրթեր, Երևան «Տնտեսագետ» իրատարակչություն, 2021 էջ 602-609: Հղումը՝ http://library.asue.am/open/gitajoxov_28_4.pdf?fbclid=IwAR1dJpcyVX-Ow9wX2b5CNgx7MZzBzPEDMffDVRzMdWrX2fCcXRhi15HF88I

5. Տեփոյան Վահագն. "ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ

ՉԵՆԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ". *Գիտական Արցախ / Научный Арцах / Scientific Artsakh*, no. 4 (7), 2020, pp. 164-177.

6. Департамент стран Ближнего Востока и Центральной Азии ПРРЭ." *Использование внешней торговли для повышения роста в регионах Ближнего Востока, Северной Африки, Афганистана и Пакистана (БВСАП), а также региона Кавказа и Центральной Азии (КЦА)*", октябрь 2017 года. URL: <https://www.imf.org/-/media/Files/Publications/REO/MCD-CCA/2017/October/CCAnovember1/Russian/chapter-4-final-rus-oct-20.ashx>

7. Михнева С. Г., Ровенская Т. В. «*Экономическая теория: учебно-методическое пособие для студентов заочной формы обучения экономических специальностей*» – Пенза : Информационно-издательский центр ПГУ, 2008. – Ч. 2. – 132 с. стр1-22. URL: https://dep_etme.pnzgu.ru/files/dep_etme.pnzgu.ru/et_ii_v3_adobepdf%281%29.pdf

8. Рикардо, Дэвид. «*Начала политической экономии и налогового обложения*». Москва.: Эксмо, 2008. С. 153–168

9. Смит, Адам. «*Исследование о природе и причинах богатства народов*»: в 5 кн. Кн. 4. О системах политической экономии. Москва. Соцэргиз, 1935. С. 32–33.

10. Степанов Евгений Александрович. «*Влияние внешней торговли на экономический рост национальной экономики*». *Вестник Челябинского государственного университета*, no. 32 (323), 2013, pp. 34-42. URL: <https://cyberleninka.ru/article/n/vliyanie-vneshney-torgovli-na-ekonomicheskij-rost-natsionalnoy-ekonomiki>

11. Юсупов К. Н., Янгиров А. В., Токтамышева Ю. С. «*Оценка взаимосвязи индикаторов экономического роста, инфляции, безработицы, внешней торговли, инноваций и инвестиций в Российской Федерации на современном этапе*», Башкирия, 2012. URL: <https://cyberleninka.ru/article/n/otsenka-vzaimosvyazi-indikatorov-ekonomicheskogo-rosta-inflyatsii-bezrabotitsy-vneshney-torgovli-innovatsiy-i-investitsiy-v>

12. Hecksher, Eli Filip, “*The Effect of Foreign Trade on the Distribution of Income*” *Economise Tidskrift*. 1919. P. 497–512.

13. Keynes, John Maynard, “*The General Theory of Employment, Interest and Money*” (The Collected Writings of John Maynard Keynes, Volume VII), London: Macmillan, 1973.

14. Ohlin, Bertil. “*Interregional and International Trade*” Cambridge (Mass.), 1933.

15. Mun, Thomas, “*Treasure by foreign trade*”, 1664

16. Quensey, Francua, “*Economic Table*”, 1758

17. Tadevosyan Zoya, Davtyan Kamo, Matevosyan Diana. “*ANALYSIS AND EVALUATION OF THE INTERRELATIONSHIPS OF THE LABOR MARKET INDICATORS OF THE REGIONS (MARZES) OF THE RA AND THE CITY OF YEREVAN*”. *Messenger of ASUE*, volume 5, Yerevan, 2022, p.75-93, <https://asue.am/upload/files/science/banber/2022-year-6/5.pdf>

WORKS CITED

1. Galoyan Diana, Tadevosyan Zoya, “*Mijazgayin tntesagitutyun: Usumnakan dzernark*”. Yerevan, [“International Economics. Training manual”, Yerevan] 2018. (In Armenian)

2. *ՀՀ Armstat tvyalneri baza*, [Database of the National Statistical Service of the Republic of Armenia]

3. *ՀՀ CB tvyalneri baza*, [Database of the Central Bank of the Republic of Armenia]

4. Matevosyan Diana. “*ՀՀ տնտեսյան շարժումն արտաքին տնտեսական շարժումների ներքին և արտաքին մարտահրավերներ*”. Yerevan, [“*Priorities of RA Economic Development: Internal and External Challenges*”, Yerevan] 2021. (In Armenian)

5. Tepoyan Vahagn. “*Տնտեսյան ամբողջականության վրա ֆինանսական համակարգի ցուցանիշների ազդեցությունը գործարարական ցուցանիշներին*” [“*The Factor Analysis of the Influence of the Financial-system Indicators on the Summarized Economic Indicators*”] 2020. (In Armenian)

6. Departament stran Blijayshego Vostoka i Centralnoy Azii, PRRE. “*Ispol'zovanie vneshney torgovli dlya povisheniya rosta s regionakh BVSAP I KCA*” [“*Using Foreign Trade to Boost Growth in the Middle East, North Africa, Afghanistan and Pakistan (MENAAP) Regions, as well as the Region Caucasus and Central Asia(CAA)*”, Moscow] 2017. (In Russian)

7. Mikhneva S. G., Rovenskaya T. V. “*Ekonomicheskaya teoria: uchebno-metodicheskoe posobie dlya studentov zaочноy formi obucheniya ekonomicheskikh special'nostey*”. Penza, [“*Economic Theory: Educational and Methodological Research for Students of the Belated Form of Studying Economic Characteristics, Penza*”] 2008. (In Russian)

8. Ricardo David. “*Nachala politicheskoy ekonomiki i nalogovoto oblojenia*”. Moscow, [“*The Beginnings of Political Economy and Taxation*”, Moscow], 2008. (In Russian)

9. Smith Adam. “*Issledovanie o prirode i prichinakh bogatstva narodov*”, [“*Research on the Nature and Causes of the Wealth of Nations*”, Moscow] 2018. (In Russian)

10. Stepanov Yevgeniy. “*Vliyanie vneshney torgovli na ekonomicheskiy rost natsionalnoy ekonomiki*”. Chelyabinsk, [“*The Impact of Foreign Trade on the Economic Growth of the National Economy*”, Chelyabinsk] 2013. (In Russian)

11. Yunusov K. N., Yangirov A. V., Toktamisheva Yu. S. “*Ocenka vzaimosvyazi indikatorov ekonomicheskogo rosta, inflyatsii, bezrabotici, vneshney torgovli, innovatsiy i investitsiy v Rossiyskoy Federatsii na sovremennom etape*”. Bashkiria [“*The Assessment of the Relationship between Indicators of Economic Growth, Inflation, Unemployment, Foreign Trade, Innovation and Investment in the Russian Federation at the Present Stage*”, Bashkiria] 2012. (In Russian)

ANALYSIS OF THE DYNAMICS OF THE MACROECONOMIC INDICATORS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE PROVISIONS ON INTERDEPENDENCE WITH FOREIGN TRADE

DIANA MATEVOSYAN

*Armenian State University of Economics,
Faculty of Regulation of Economy and International Economic Relations, Chair of
International Economic Relations, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

Macroeconomic indicators are the parameters of a country's economic passport due to the fact that one aggregated unit (one digit) manages to characterize an entire subsector of the economy.

The purpose of the article is to identify the areas of interdependence of the macroeconomic indicators of the Republic of Armenia, to test hypotheses about the main macroeconomic links for the Republic of Armenia. The article uses statistical modeling and analysis tools: analysis of dynamics by chain and basic indicators, analysis by average dynamics indicators, structural analysis, correlation and regression analysis.

The results of the analysis indicate that not all the provisions common in the economic literature namely, export-economic growth, import-economic growth, unemployment rate-inflation (Phillips curve) can be applied in the case of RA. . Net exports were considered as an effective indicator of the external sector, and the relationship between the other indicators of the corresponding "golden quadrilateral" was calculated. Calculations have shown that net exports have no significant or interpreted from the point of view of economic literature links with any of the variables of the "golden quadrangle".

It also turned out that RA imports are quite sensitive to changes in income. Unemployment rate-dependence of GDP: Ou-Ken's law also applies in the case of RA. Increasing the level of digitalization of the economy is a significant factor in the economic growth of the Republic of Armenia.

Keywords: *system of macroeconomic indicators, the level of digitalization of the economy, ICT index, economic growth, "Golden quadrilateral", macroeconomic interdependence, correlation coefficient, dynamics indicators.*

АНАЛИЗ ДИНАМИКИ МАКРОЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ РА И ПОЛОЖЕНИЯ О ВЗАИМОЗАВИСИМОСТИ С ВНЕШНЕЙ ТОРГОВЛЕЙ

ДИАНА МАТЕВОСЯН

*аспирантка кафедры международных экономических отношений факультета регулирования экономики и международных экономических отношений
Армянского государственного экономического университета
г. Ереван, Республика Армения*

Макроэкономические показатели являются параметрами экономического паспорта страны благодаря тому, что одной Агрегированной единицей (одной цифрой) удастся охарактеризовать целый подсектор экономики.

Цель статьи - выявление направлений взаимозависимости макроэкономических показателей РА, проверка гипотез об основных макроэкономических связях для РА. В статье использованы инструменты статистического моделирования и анализа: анализ динамики по цепным и базисным показателям, анализ по средним показателям динамики, структурный анализ, корреляционно-регрессионный анализ.

Результаты проведенного анализа свидетельствуют о том, что не все положения, распространенные в экономической литературе, действуют в случае РА, в частности, следующие связи: экспорт-экономический рост, импорт-экономический рост, уровень безработицы-инфляция (кривая Филлипса). В качестве результативного показателя внешнего сектора рассматривался чистый экспорт, и была рассчитана связь между остальными показателями соответствующего «золотого четырехугольника». Расчеты показали, что чистый экспорт не имеет значимых или интерпретируемых, с точки зрения экономической литературы, связей ни с одной из переменных «золотого четырехугольника».

Также выяснилось, что импорт РА довольно чувствителен к изменению доходов. Уровень безработицы-ВВП: закон Оу-Кена также действует в случае РА. Повышение уровня цифровизации экономики является существенным фактором экономического роста РА.

Ключевые слова: *система макроэкономических показателей, уровень цифровизации экономики, индекс ИКТ, экономический рост, «Золотой четырехугольник», макроэкономические взаимозависимости, коэффициент корреляции, показатели динамики.*